

# ԿՐԻՊՏՈՒՐԺՈՒՅԹՆԵՐ.

ՌԻՍԿ, ԹԵ՛

## ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

DOI: 10.52174/2579-2989\_2023.4-5

**Հիմնաբառեր.** կրիպտոարժույթ, բլոկչեյն համակարգ, մայնինգ, իրավական կարգավորում

Համաշխարհային արժույթաֆինանսական համակարգում կրիպտոարժույթները նոր տեսակի արժույթ են: 2009 թ. ստեղծվել է առաջին կրիպտոարժույթը, իսկ այսօր շրջանառվում են դրա ավելի քան 10000 տեսակներ, սակայն դրանցից ոչ բոլորն են արդյունավետ կերպով կիրառվում՝ շուկայի գերիազեցվածության, գների անկայունության և իրազեկվածության բացակայության պատճառով: «Կրիպտոարժույթ» անվանումը ստացած արժույթի այս նոր տարատեսակն ընդամենը մեկ տասնամյակում հիմնովին վերափոխել է համաշխարհային արժույթային, ներդրումային, տնտեսական իրողությունները: Արժույթաֆինանսական համակարգում լինելով նորամուտային՝ այն բազմիցս ենթարկվել է սուր քննադատությունների, սակայն չենք կարող չնշել նաև այս նոր երևույթի նկատմամբ փորձագետների դրական վերաբերմունքի մասին: Հոդվածում դիտարկվել են կրիպտոարժույթի հաջողություն ունենալու հնարավոր պատճառները, ինչպես նաև դրա հետագա տարածմամբ պայմանավորված ռիսկերն ու հնարավորությունները: Քննարկվել են կրիպտոարժույթի իրավական կարգավորման հետ կապված մոտեցումները արարքեր երկրներում:

Սատոշի Նակամոտոն<sup>1</sup> կրիպտոարժույթի «հայրը», բիթքոյնի ստեղծմամբ ընդմիշտ փոխեց համաշխարհային ներդրումային իրականություն-

<sup>1</sup> Բիթքոյնը ստեղծող անհատի կամ անհատների խմբի կեղծանունն է: Սատոշի Նակամոտոյի կերպարը, լինի դա անձ, թե խումբ, նշանակալի է բոլոր ժամանակների ամենամեծ տեխնիկական նվաճումներից մեկի համար:



### Գրեալ ԳՈՒՐՈՒՐՅԱՆ

ՀՊՏՀ մագիստրանտ

2023 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ, ապա ընդունվել մագիստրատուրա՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» կրթական ծրագրով:

2023-ից աշխատում է ՀՀ ԿԳՄՍ «Պատմամշակութային արգելոց թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ում՝ որպես հաշվապահ: ՈւԳԸ 40-րդ նստաշրջանի շըրջանակում լույս ընծայվող «Երիտասարդ գիտնական» հոդվածների ժողովածուում տպագրվել է նրա առաջին հետազոտական աշխատանքը՝ «ՀՀ զբոսաշրջության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները հետքովիդային ժամանակահատվածում» թեմայով:


<https://orcid.org/0009-0006-5946-8996>

նը: «Կրիպտոարժույթ» եզրույթն առաջին անգամ հանրությանը ներկայացվեց 2011 թ.<sup>2</sup> Bitcoin-ի մասին Forbes-ի հոդվածում<sup>3</sup>:

Որո՞նք են կրիպտոարժույթի կիրառության հեռանկարները և ի՞նչ ռիսկեր ու հնարավորություններ կարող են ներառել: Թեման, բազմաթիվ վերլուծաբանների հետազոտության կիզակետում լինելով հանդերձ, մի շարք հակասական երևույթներ է ի հայտ բերում: Հատկանշական դիտարկում է այն, որ առաջին կրիպտոարժույթի՝ բիթքոյնի ստեղծման ժամանակաշրջանը, կարծես թե, պատահական բնույթ չունի: Կրիպտոարժույթը ծնվեց 2008 թ.<sup>4</sup> համաշխարհային ֆինանսական ճգնաժամի համատեքստում, երբ ֆինանսական համակարգի թերություններն ակնհայտ դարձան՝ վտանգելով հասարակության վստահությունը ֆինանսական կառույցների նկատմամբ: Համաշխարհային ճգնաժամը բեկումնային էր, և հենց այդ ընթացքում սկիզբ առավ ֆինանսական ու դրամական համակարգերի թերությունների առավել խորացված ուսումնասիրությունը, և փնտրվում էին այլընտրանքային տար-

բերակներ: Սատոշա Նակամոտոն ճիշտ տեղում և ճիշտ ժամանակին հանրությանը ներկայացրեց կրիպտոարժույթի գաղափարը, որով էլ հիմք դրվեց կրիպտոտնտեսության զարգացմանը: 2010 թ. մայիսի 22-ին տեղի ունեցավ Bitcoin-ով առաջին գնումը: Մի ծրագրավորող 10.000 բիթքոյնով Papa John's-ից գնեց 2 մեծ պիցցա: Դրանք երբևէ զոյություն ունեցած ամենաթանկ պիցցաներ էին, որոնց արժեքն այսօրվա չափանիշներով մոտ 200 մլն ԱՄՆ դոլար է<sup>5</sup>: Ներկայում կան ավելի քան 10000 տեսակի կրիպտոարժույթներ<sup>6</sup>: Գծապատկեր 1-ում ներկայացված է 2022 թ.-ի դրությամբ ամենատարածված կրիպտոարժույթների շուկայական կապիտալացումը, որտեղ առյուծի բաժինը պատկանում է բիթքոյնին:

Կրիպտոարժույթների բովանդակությունը հասկանալու և դրանք նմանատիպ այլ ակտիվներից տարբերակելու համար անհրաժեշտ է, նախևառաջ, տալ դրանց սահմանումը և համեմատել ֆիատ և էլեկտրոնային փողերի հետ (աղյուսակ 1)<sup>7</sup>: Ֆիատ փողը կենտրոնացված լիազոր մարմնի թողարկած թղթային արժույթն



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

**Կրիպտոարժույթների շուկայական կապիտալացումը, 2022 թ. (մլրդ ԱՄՆ դոլար)<sup>7</sup>**

<sup>2</sup> Andy Greenberg, Crypto Currency, April 20, 2011. Available at, <https://www.forbes.com/forbes/2011/0509/technology-psilocybin-bitcoins-gavin-andresen-crypto-currency.html?sh=6421d66f353e>

<sup>3</sup> Dan Ashmore, Bitcoin Price History 2009 to 2022, October 11, 2022, available at <https://www.forbes.com/advisor/investing/cryptocurrency/bitcoin-price-history/>

<sup>4</sup> <https://www.statista.com/statistics/863917/number-crypto-coins-tokens/>

<sup>5</sup> Andrew Tar Digital Currencies vs. Cryptocurrencies. Dec 13, 2017. <https://cointelegraph.com/explained/digital-currencies-vs-cryptocurrencies-explained>

<sup>6</sup> James Chen, Fiat Money: What It Is, How It Works, Example, Pros & Cons, 2022, <https://www.investopedia.com/terms/f/fiatmoney.asp>

<sup>7</sup> Գծապատկերը կազմել է հեղինակը: Տվյալները հասանելի են հետևյալ կայքում՝ <https://www.nasdaq.com/articles/top-10-cryptocurrencies-of-2022>

ԱՂՅՈՒՍԱԿ 1

**Կրիպտոարժույթի և փողի այլ տեսակների համեմատական բնութագիրը<sup>8</sup>**

Տարարեսակը/հատկանիշը	Էլեկտրոնային փող	Ֆիսիկ փող	Կրիպտոարժույթ
Հուսալիություն	-	+	-
Փոխարկելիություն	+	+	+
Պետական վերահսկողություն	+	+	-
Գործարքների ուղղակի բնույթ	-	-	+
Անանունություն	-	-	+

է<sup>6</sup>: Դա կապված չէ որևէ արժեքավոր ակտիվի հետ, ապահովված չէ ապրանքներով կամ այլ նյութական արժեքներով:

Էլեկտրոնային փողը դրամական միջոց է, որը գոյություն ունի էլեկտրոնային տեսքով<sup>9</sup>: Այն թողարկողի նկատմամբ դրամական պահանջ արտահայտող համապատասխան արժեք է, որը՝

- պահվում է էլեկտրոնային սարքի վրա,
- թողարկվում է ստացված դրամական միջոցների դիմաց, որոնց արժողությունը չի կարող ավելի փոքր լինել, քան թողարկված էլեկտրոնային փողի արժեքը,
- ընդունվում է որպես վճարամիջոց թողարկողից տարբերվող այլ անձանց կողմից<sup>10</sup>:


Կրիպտոարժույթը թվային ակտիվ է, որն առցանց հարթակում կատարում է փողի գործառույթ՝ հանդես գալով որպես փոխանակման և վճարման միջոց: Անդրադառնալով փողի յուրահատուկ ապրանք լինելու փաստին՝ հիշենք ավստրիական տնտեսագիտական դպրոցի հիմնադիր Կ. Մենգերի այն դիտարկումը, ըստ որի՝ ապրանքը դառնում է փող՝ շուկայում ազատորեն փոխարկվելու և վաճառվելու շնորհիվ<sup>11</sup>:

Կրիպտոարժույթը թվային և վիրտուալ արժույթ է, որի ստեղծումն ու վերահսկողությունը հենվում են կրիպտոգրաֆիական մեթոդների՝ փողի կոդավորման

վրա<sup>12</sup>: Կրիպտոարժույթների դեպքում օգտագործվում է ապակենտրոնացված համակարգ՝ ի տարբերություն «ավանդական» կենտրոնական բանկերի: Աշխատանքի հիմքում բաշխված գրանցամատյանների տեխնոլոգիան է (Distributed Ledger Technology), ինչը թույլ է տալիս փոխանցումներն իրականացնել առանց միջնորդի (P2P), իսկ սա նշանակում է, որ գործարքները տնտեսապես ավելի շահավետ են դառնում, և մասնակիցները, անկախ իրենց սոցիալական և ֆինանսական դիրքից, գործարքների իրականացման հարցում ունեն հավասար հնարավորություններ:

Կրիպտոարժույթի հիմքում տվյալների բազայի ապակենտրոնացման համակարգն է՝ բլոկչեյնը: Սա էլ, իր հերթին, վկայում է, որ կրիպտոարժույթի թվային կոդերը (պայմանանշանները) տեղակայված են աշխարհի տարբեր կետերում գտնվող համակարգչային բազաներում՝ մայնինգային ֆերմաներում<sup>13</sup>: Ձեռք բերելով կրիպտոարժույթ՝ անձը ստանում է թվային կոդ, որն ունի որոշակի պայմանական արժեք ֆինանսական և ապրանքային շուկայում: Յուրաքանչյուր ապրանքի, նույնիսկ արժույթների գները այլ հավասար պայմաններում ձևավորվում են ըստ պահանջարկի և առաջարկի: Կրիպտոարժույթը մի ակտիվ է, որը չի թողարկում որևէ երկիր, ապահովված չէ որևէ

<sup>8</sup> Andrew Tar, Digital Currencies vs. Cryptocurrencies. December 13, 2017, <https://cointelegraph.com/explained/digital-currencies-vs-cryptocurrencies-explaine>  
<sup>9</sup> «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=67780>  
<sup>10</sup> Աղյուսակը կազմել է հեղինակը:  
<sup>11</sup> On the Origin of Money by Carl Menger (1892), [Economic Journal, Volume 2 (1892), pp. 239-55. Translated by Caroline A. Foley.], <https://monadnock.net/menger/money.html>  
<sup>12</sup> Ասլանյան Ա. Լ., Էլեկտրոնային փողը և դրա զարգացման հեռանկարները, 2018, [http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2019\\_7\\_78\\_84.pdf](http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2019_7_78_84.pdf)  
<sup>13</sup> Ղալայան Ի., Կրիպտոարժույթի շուկայի ճգնաժամը, 29.01.2019, <https://orbeli.am/hy/post/115/2019-01-29/%D4%B-F%D6%80%D5%AB%D5%BA%D5%BF%D5%B8%D5%A1%D6%80%D5%AA%D5%B8%D6%82%D5%B5%D5%A9%D5%AB+%D5%B7%D5%B8%D6%82%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB+%D5%B3%D5%A3%D5%B6%D5%A1%D5%AA%D5%A1%D5%B4%D5%A8>



ԳԾԱԿԱՏԿԵՐ 2

**Բիթքոյնի գնային տատանումները, 2010-2022 թթ. (ԱՄՆ դոլար)<sup>14</sup>**

թանկարժեք մետաղով, և դրա արժեքը ձևավորվում է ըստ շուկայական կառուցակարգի՝ հենվելով առաջարկի և պահանջարկի վրա: Ըստ տնտեսագիտության Նոբելյան մրցանակակիր, Յելի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Շիլլերի՝ ի տարբերություն ոսկու և այլ ակտիվների, բիթքոյնի արժեքը ձևավորվում է հասարակության հետաքրքրության արդյունքում<sup>15</sup>:

Որպեսզի կրիպտոարժույթը կիրառվի որպես վճարամիջոց, անհրաժեշտ է, որ այն վայելի կիրառողների համատարած վստահությունը, որն էլ, իր հերթին, պայմանավորված է դրա կայունությամբ: Հարկ ենք համարում նշել, որ կրիպտոարժույթների նկատմամբ թերահավատության հիմնական պատճառը դրանց գնային կտրուկ տատանումներն են, որոնք էլ պայմանավորված են շուկայում բարձր պահանջարկով: Որպես օրինակ՝ նշենք բիթքոյնի գնային տատանումները 2010-2022 թթ.: Այս ընթացքում 1 բիթքոյնի արժեքը 0,09 ԱՄՆ դոլարից հասել էր 18000-ի (պատմական առավելագույնին հասնելով 2021 թ.-ին՝ 68991 ԱՄՆ դոլար): Գծապատկեր 2-ից ակնհայտ է դառնում, որ բիթքոյնի գնային տատանումներն ունեն պարբերաշրջանային բնույթ: Դրանք երկարաժամկետում օժտրված են անկանխատեսելիության բարձր

մակարդակով:

Կրիպտոարժույթները, որոնք ստեղծվել են բիթքոյնից հետո, համարվում են ալթքոիններ. դրանք այլընտրանքային կրիպտոարժույթներ են («Altcoin» եզրույթը երկու բառի համակցություն է. «alt» և «coin», որտեղ alt-ը նշանակում է «այլընտրանք», իսկ coin-ը՝ «կրիպտոարժույթ»): «Ալթքոյն» եզրույթն ընդհանրական կերպով ներառում է բոլոր կրիպտոարժույթները, բացի բիթքոյնից: Ներկայում բիթքոյնից հետո ամենամեծ կապիտալացում ունեցող կրիպտոարժույթը էթերիումն է: Վերջինիս շուկայական կապիտալացումը ավելի քան 192,2 մլրդ ԱՄՆ դոլար է<sup>16</sup>, իսկ առավելագույն արժեքը գրանցվել է 2021 թ.-ի նոյեմբերին՝ կազմելով 4815 ԱՄՆ դոլար<sup>17</sup>. կրիպտոարժույթն իր գոյության ութ տարիների ընթացքում աճել է ավելի քան 1300%-ով:


Սա ևս մեկ անգամ ակնհայտ է դարձնում կրիպտոարժույթների գնային տատանումների բարձր մակարդակը, սակայն նաև գրավչության բարձր աստիճանի ցուցիչ է: Չենք կարող հերքել, որ կրիպտոարժույթներում ներդրումներ կատարելը հրապուրիչ է՝ եկամտի տեսանկյունից և, միաժամանակ, բավական ռիսկային: Հենց սա էլ համարվում է տնտեսագիտական պարզ ճշմարտություններից մեկը. ռիսկ

<sup>14</sup> Գծապատկերը կազմել է հեղինակը: Տվյալները հասանելի են կայքում՝ <https://www.investopedia.com/articles/forex/121815/bitcoins-price-history.asp>

<sup>15</sup> Robert Shiller "Irrational Exuberance", 2017, <https://www.investopedia.com/news/yale-economist-believes-bitcoin-bubble-could-last-100-years/>

<sup>16</sup> <https://www.coinbase.com/ru/price/ethereum>

<sup>17</sup> <https://www.globaldata.com/data-insights/financial-services/etheriums-price-history/#:~:text=From%202019%20to%202021%2C%20Ether,%244%2C815%20on%20November%209%2C%202021>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

**Էթերիումի գնային տատանումները, 2015-2022 թթ. (ԱՄՆ դոլար)<sup>18</sup>**

ու եկամուտն ուղիղ համեմատական են, հետևաբար՝ որքան մեծ լինի ռիսկը, այնքան բարձր կարող է լինել եկամուտը:

Ուսումնասիրելով գնային տատանումները (աղյուսակ 2)<sup>19</sup>՝ հարկ ենք համարում նշել, որ մի շարք կրիպտոարժույթների (Tether, USD Coin, Binance USD) գները իրենց գոյության ընթացքում էականորեն չեն փոփոխվել, ի տարբերություն համաշխարհային մեծ ճանաչում ունեցող կրիպտոարժույթների: Սրանք կայուն կրիպտոարժույթներ (Stablecoins) են, որոնք հիմնականում միտված են շտկելու այն թերությունները, որոնց պատճառով կրիպտոարժույթները մշտապես ենթարկվում են քննադա-

տության: Այստեղ հետաքրքրաշարժ դիտարկում է այն, որ բոլոր ակտիվ Stablecoin-ների 50%-ը մշակված է Ethereum ցանցում<sup>19</sup>, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ էթերիումը թույլ է տալիս հեշտությամբ ինտեգրվել՝ կայուն կրիպտոարժույթներին աջակցելու համար: Իրենց առավելություններով հանդերձ, կարծում ենք՝ կայուն կրիպտոարժույթներն ունեն հատկանշական մեկ թերություն. հիմքում ունենալով կենտրոնացված համակարգ, դրանք ինքնին հակասում են կրիպտոարժույթի ստեղծման հիմնարար պատճառներից մեկին՝ ապակենտրոնացվածությանը:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

**Կրիպտոարժույթների գները (ԱՄՆ դոլար)<sup>20</sup>**

Կրիպտոարժույթներ / Կարեբեթիկը	Bitcoin	Ethereum	Tether	BNB	USD Coin	XRP	Cardano	Binance USD	Polygon	Dogecoin
2009	0.05	-	-	-	-	-	-	-	-	-
2010	0.29	-	-	-	-	-	-	-	-	-
2011	4.14	-	-	-	-	-	-	-	-	-
2012	13.34	-	-	-	-	-	-	-	-	-
2013	715.06	-	-	-	-	0.03	-	-	-	0.0003
2014	317.39	-	-	-	-	0.03	-	-	-	0.0002
2015	430.72	0.86	1.00	-	-	0.01	-	-	-	0.0001
2016	973.35	7.15	1.00	-	-	0.01	-	-	-	0.0002
2017	13376.91	755.06	1.01	4.74	-	1.05	0.41	-	-	0.0094
2018	3796.71	130.47	1.02	6.06	1.01	0.34	0.04	-	-	0.0027
2019	7220.38	126.23	1.00	13.45	1.01	0.17	0.03	1.00	0.01	0.0021
2020	28872.69	626.71	1.00	33.47	1.00	0.17	0.15	1.00	0.02	0.0045
2021	48875.88	4066.14	1.00	545.49	1.00	0.86	1.47	1.00	2.55	0.1673
2022	16822.52	1227.66	1.00	246.15	1.00	0.35	0.25	1.01	0.78	0.0772

<sup>18</sup> Գծապատկերը կազմել է հեղինակը: Տվյալները հասանելի են կայքում՝ <https://www.coinbase.com/ru/price/ethereum>  
<sup>19</sup> Schweiger, Lucas. "STABLECOINS An Overview of the Current State of Stablecoins." Blockdata, 2018, available at <https://download.blockdata.tech/blockdata-stablecoin-report-blockchain-technology.pdf>  
<sup>20</sup> Աղյուսակը կազմել է հեղինակը՝ <https://www.coinbase.com/ru/explore> կայքի տվյալների հիման վրա:



Կրիպտոարժույթների մասին խոսելիս, սովորաբար, դրանք զուգորդվում են բիթքոյնի հետ: Պատճառը հիմնականում այն է, որ բիթքոյնն իր տեսակի մեջ առաջինն էր. այն «peer-to-peer» տեխնոլոգիան օգտագործող առաջին կրիպտոարժույթն էր, որը թույլ էր տալիս օգտատերերին վճարումներ կատարել մետաղադրամներով: Բայց այժմ ավելի քան ակնհայտ է, որ բիթքոյնն այլևս միակը չէ, և ամեն օր, կարելի է ասել, որ նոր կրիպտոարժույթներ են ստեղծվում ու վերանում: Անդրադառնալով այլքոյններին՝ ներկայացնենք շուկայական մեծ կապիտալացում ունեցող XRP-ն, BNB-ն և Dogecoin-ը, որոնք, որպես կրիպտոարժույթներ, ունեն իրենց առանձնահատկությունները: Շուկայական կապիտալացմամբ 3-րդ հորիզոնականում XRP-ն է (Ripple): Ստեղծվելով 2012 թ.-ին՝ դրա ներկայիս կապիտալացումը 18.8 մլրդ ԱՄՆ դոլար է: Ripple բլոկչեյնի առանձնահատկությունն այն է, որ վերջինս հիմնված չէ Proof-of-Work ալգորիթի վրա: Այն հնարավոր չէ մայնինգ անել, քանի որ ի սկզբանե ստեղծվել է 100 մլրդ XRP, որից միայն 40 մլրդ-ն է գտնվում շուկայում՝ նախատեսված վաճառքի համար<sup>21</sup>: XRP-ն ունի ևս մեկ առանձնահատկություն. դրանով կատարվող յուրաքանչյուր գործարքում մի փոքր քանակություն (0.00001 XRP) ոչնչացվում է՝ նվազեցնելով այս գումարն ընդհանուր առաջարկից<sup>22</sup>: Քանի որ առկա է 100 մլրդ XRP, այս ոչնչացումն աննշան է և էականորեն չի ազդում գնի վրա:

BNB-ն «Բինանս» բորսայի թողարկած կրիպտոարժույթն է: BNB-ն տոկեն է՝ ստեղծված ըստ Ethereum բլոկչեյնի, որի դեպքում նույնպես կիրառվում է ոչնչացման մոտեցումը. BNB-ի white paper-ում ներկայացված է, որ յուրաքանչյուր եռամսյակում կրիպտոարժույթի վաճառքից ստացված եկամտի 20%-ն ուղղվելու է ցանցից

տոկեններ հետ գնելուն և դրանց շրջանառությունից դուրսբերմանը<sup>23</sup>: Ունենալով BNB՝ «Բինանս» բորսայում հնարավոր է գնել ավելի քան 60 կրիպտոարժույթ, բացի այդ, այն հնարավորություն է ընձեռում «Բինանս» բորսայում առևտուր անելիս միջնորդավճարի համար ստանալու 50% զեղչ<sup>24</sup>: BNB-ի շուկայական կապիտալացումը ներկայում 45.5 մլրդ ԱՄՆ դոլար է, իսկ դրա առավելագույն արժեքը գրանցվել է 2021 թ. մայիսին՝ 690,93 ԱՄՆ դոլար<sup>25</sup>:

Հաջորդ կրիպտոարժույթը, որին ցանկանում ենք անդրադառնալ, Dogecoin-ն է: Ստեղծվել է 2013 թ.-ին, իսկ ներկայում դրա շուկայական կապիտալացումը 9,8 մլրդ ԱՄՆ դոլար է<sup>26</sup>: Ի տարբերություն բիթքոյնի, որն առկա է սահմանափակ քանակությամբ, Dogecoin-ը չունի քանակական սահմանափակում: Ամեն րոպե արդյունահանվում է 10000 նոր Dogecoin: Հետաքրքրական է այն դիտարկումը, որ այս կրիպտոարժույթի գնի վրա էական ազդեցություն ունեն Tesla-ի գործադիր տնօրեն Իլոն Մասկի թվիթերյան հրապարակումները՝ դրական լույսի ներքո, որոնցից հետո կրիպտոարժույթի գինը բարձրանում է անասելի մեծ տոկոսադրույքներով, և նույնը՝ հակառակ պարագայում<sup>27</sup>:

Անդրադառնալով իր տեսակի մեջ ևս մեկ հետաքրքրական կրիպտոարժույթի՝ մոնետրոյին (XMR), պետք է ասել, որ այն բաց կողով ապակենտրոնացված կրիպտոարժույթ է, որը հիմնվում է գաղտնիության և անանոնության սկզբունքների վրա: Սկսել է կիրառվել 2014 թ.-ին և այժմ դարձել է ամենամեծ շուկայական կապիտալացում ունեցողներից մեկը (շուկայական կապիտալացումը 2022 թ.-ին 2,7 մլրդ ԱՄՆ դոլար էր)<sup>28</sup>: Մոնետրոն իր պատմական առավելագույն գնին հասել է 2021 թ. մայիսին՝ կազմելով 517,62 ԱՄՆ դոլար: Մոնետրոն և նմանատիպ այլ կրիպտոարժույթ-

<sup>21</sup> Հ.Դանիելյան, Խորհրդավոր կրիպտոաշխարհ, Երևան, 2019:

<sup>22</sup> Shailak Jani, An overview of Ripple Technology & its comparison with Bitcoin Technology, 2018, available at [https://www.researchgate.net/profile/Shailak-Jani/publication/322436263\\_An\\_Overview\\_of\\_Ripple\\_Technology\\_its\\_Comparison\\_with\\_Bitcoin\\_Technology/links/5a58ad76458515211cc8a6e4/An-Overview-of-Ripple-Technology-its-Comparison-with-Bitcoin-Technology.pdf](https://www.researchgate.net/profile/Shailak-Jani/publication/322436263_An_Overview_of_Ripple_Technology_its_Comparison_with_Bitcoin_Technology/links/5a58ad76458515211cc8a6e4/An-Overview-of-Ripple-Technology-its-Comparison-with-Bitcoin-Technology.pdf)

<sup>23</sup> BNB Whitepaper, available at <https://www.exodus.com/assets/docs/binance-coin-whitepaper.pdf>

<sup>24</sup> Հ.Դանիելյան, Խորհրդավոր կրիպտոաշխարհ, Երևան, 2019:

<sup>25</sup> Տվյալները հասանելի են կայքում՝ <https://www.coinbase.com/ru/price/bnb>

<sup>26</sup> Տվյալները հասանելի են կայքում՝ <https://www.coinbase.com/ru/price/dogecoin>

<sup>27</sup> Blockchain Research Lab, How Elon Musk's Twitter activity moves cryptocurrency markets, 2022, available at <https://www.blockchainresearchlab.org/wp-content/uploads/2020/05/BRL-Working-Paper-No-16-How-Elon-Musks-Twitter-activity-moves-cryptocurrency-markets-v2.pdf>

<sup>28</sup> Տվյալները հասանելի են կայքում՝ <https://www.coinbase.com/ru/price/monero>

ներ ևս, իրենց անանունության բարձր մակարդակով էապես տարբերվում են շուկայական մեծ տարածում ունեցող կրիպտոարժույթներից. ցանցում ոչ ոք չի կարող ասել, թե ով որքան մոնետո է ուղարկել կամ ստացել, ի տարբերություն, օրինակ, բիթքոյնի, որի դեպքում ուղարկողի հասցեն, գումարի չափը և ստացողի հասցեն գրանցվում են հանրային գրանցամատյանում:

Մոնետոյի բլոկչեյնը միտումնավոր կերպով ստեղծված է անթափանց լինելու համար: Գործարքների մանրամասները՝ ուղարկողների և ստացողների ինքնություն, յուրաքանչյուր գործարքի գումար և այլն, անանուն են՝ քողարկելով մասնակիցների կողմից օգտագործվող հասցեները: Վերջիններս ապահովում են լրացուցիչ գաղտնիություն, քանի որ ստեղծվում են պատահականորեն՝ մեկանգամյա օգտագործման համար՝ ստացողի անունից: Այս գաղտնի հասցեների օգտագործումը հնարավորություն է տալիս թաքցնելու ինչպես գործարքի իրական նպատակակետի հասցեն, այնպես էլ ստացող մասնակցի ինքնությունը, ինչը կարող է անբարեխիղճ նպատակներով օգտագործման պատճառ դառնալ (սև շուկայի սպասարկում, այդ թվում՝ թմրանյութերի վաճառք և մոլախաղեր): Քողարկվածության բարձր մակարդակի հետ մեկտեղ, մոնետոյի դեպքում մայնինգը հիմնված է էգալիտար հայեցակարգի վրա (բոլոր մարդիկ հավասար են և պետք է ունենան հավասար հնարավորություններ):

Թերևս, ժամանակակից տնտեսական աշխարհում լինելով բավական նոր երևույթ, կրիպտոարժույթները մեծ հաջողություններ են գրանցում: Դրանց հաջողության գրավականը ներկայացրել է Պեդրո Գոմես Մարտին Ռոմոն<sup>29</sup> առանձնացնելով հինգ հիմնական պատճառներ: Առաջինը, ըստ հեղինակի, ազգային արժույթների կառավարման ձախողումն է: Ավելի շատ

դրամական միավորներ թողարկելը, քան անհրաժեշտ է շուկային, հանգեցնում է գնաճի, ինչպես նաև ակտիվների արժեքի բարձրացման: Երկրորդ պատճառը բացատրվում է որոշ երկրների արժույթների պարտադիր փոխարկման կիրառմամբ. ներքին շուկայում չունենալով փոխարկելիություն՝ կրիպտոարժույթներով գործարք կատարելը դառնում է ավելի իրատեսական, քանի որ դրանց միջոցով հնարավոր է լինում շրջանցել պետական վերահսկողությունը: Երրորդ պատճառը հասարակության սպեկուլյատիվ շարժառիթներն են: Հեղինակը համեմատականներ է տանում 17-րդ դարում առաջացած «Հոլանդական հիվանդության» և կրիպտոարժույթներում ներդրումներ կատարելու միջև<sup>30</sup>: Բանն այն է, որ երբեմն սխալ կանխատեսումները, ինչպես նաև մեծամասնության ներդրումների՝ նույն ոլորտում կուտակումը ոչ միայն մեծացնում են շահերի բախումն ու մրցակցությունը, այլև ունենում հակառակ ազդեցություն: Կրիպտոարժույթների հաջողության չորրորդ պատճառը հեղինակը համարում է այն, որ որոշ երկրներ կրիպտոարժույթներն ընդունում են որպես աշխատանքային գործիքներ: Օրինակ՝ 2021 թ. հունիսին Սալվադորը բիթքոյնն ընդունեց որպես օրինական վճարամիջոց<sup>31</sup>, իսկ նույն թվականի օգոստոսին Կուբան այն ճանաչեց որպես այլընտրանք՝ երկրում օգտագործվող վճարամիջոցին զուգահեռ կիրառությամբ<sup>32</sup>: Սակայն, հենց նույն տարվա սեպտեմբերին Չինաստանն արգելեց բիթքոյնով բոլոր տեսակի գործարքները՝ կապիտալի արտահոսքը կանխելու նպատակով<sup>33</sup>: Կրիպտոարժույթների կիրառումը խթանող հինգերորդ հատկանշական պատճառը, ըստ հեղինակի, պետական վերահսկողության բացակայությունն է, ինչի շնորհիվ՝ կրիպտոարժույթները հեշտորեն գործածվում են փողերի լվացման և կազմակերպված հանցավորության պարագայում:

<sup>29</sup> Pedro Gómez Martín-Romo, Invertir en bitcoins, 15th January 2022, <https://www.ibercampus.es/invertir-en-bitcoins-razones-del-exito-y-riesgos-evidentes-incluido-un-derrumbe-que-termine-pagando-toda-la-sociedad.htm>

<sup>30</sup> Նույն տեղում:

<sup>31</sup> Henri Arslanian, El Salvador's law: a meaningful test for Bitcoin, 2021, available at <https://www.pwc.com/gx/en/financial-services/pdf/el-salvadors-law-a-meaningful-test-for-bitcoin.pdf>

<sup>32</sup> Marc Frank, Cuba approves cryptocurrency services, requires central bank license, April 28, 2022, available at <https://www.reuters.com/world/americas/cuba-approves-cryptocurrency-services-requires-central-bank-license-2022-04-27/>

<sup>33</sup> What's behind China's cryptocurrency ban? Jan 31, 2022, available at <https://www.weforum.org/agenda/2022/01/what-s-behind-china-s-cryptocurrency-ban/>

Այժմ անդրադառնանք այն ռիսկերին և հնարավորություններին, որոնք կարող են առաջանալ կրիպտոարժույթների կիրառմամբ և դրանց հետագա զարգացմամբ:

**Ռիսկեր:** Կրիպտոարժույթի ստեղծումից ի վեր վերլուծաբանների շրջանում գերիշխում է այն կարծիքը, որ դա դասական ֆինանսական «փուչիկ» է, որն ամեն պահի կարող է պայթել<sup>34</sup>: Այս մտայնությունը հիմնականում պայմանավորված է կրիպտոարժույթների նկատմամբ սպեկուլյատիվ մեծ պահանջարկով ու անորոշության բարձր մակարդակով:

Որպես բացառապես թվային տեսք ունեցող փոխանակման միջոց՝ կրիպտոարժույթները որևէ կերպ չեն վերահսկվում պետության և բանկային համակարգի կողմից: Իրավական տեսանկյունից ևս, խնդրահարույց է դրանց կարգավիճակի հստակեցումը: Երկրները տարակարծիք են դրանց բնույթի վերաբերյալ. մեծամասնությունը կրիպտոարժույթները դիտարկում է որպես արժույթ, որոշները՝ ապրանք, փող կամ սեփականություն<sup>35</sup>:

Կրիպտոարժույթի իրավական կարգավիճակի անորոշությամբ պայմանավորված՝ շատ երկրների բանկեր հիմնականում հրաժարվում են դրա օգտագործումից: Անանուն մասնակիցների առկայու-

թյունը կասկածի տակ է դնում գործարքների օրինականությունը միջազգային իրավական դաշտում, և շատ ընկերություններ պարզապես խուսափում են օգտագործել բլոկչեյն՝ վճարումներ կատարելու համար՝ գերադասելով ավանդական արժույթները: Համակարգը հնարավորություն է տալիս չբացահայտելու գործարքի մասնակիցների ինքնությունը, ինչը ինքնին կարող է պարունակել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկեր: Թեև համակարգը թափանցիկ է, սակայն այն դեռևս գրավիչ է միայն ստվերային տնտեսության համար:

Հաջորդ լուրջ խոչընդոտը, որը կարող է ի հայտ գալ կրիպտոարժույթի լանդսկեյպի կիրառման պարագայում, էլեկտրաէներգիայի սպառման անհամեմատ բարձր մակարդակն է<sup>36</sup>. Կրիպտոարժույթների մայնինգը պահանջում է էլեկտրաէներգիայի սպառման մեծ ծավալ, ինչը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի աստիճանական վատթարացմանը:

Մեկ այլ թերություն է կրիպտոարժույթով կատարվող գործարքների փոքր քանակությունը՝ ֆոնդային բորսաների համեմատությամբ: Ֆոնդային բորսաներում վայրկյանում կատարվում է ավելի քան 80000 գործարք, մինչդեռ բիրթոյնով՝ մին-

ԱՂՅՈՒՍԱԿ 2

**Կրիպտոարժույթի կարգավիճակն աշխարհի տարբեր երկրներում<sup>37</sup>**

Երկրներ, որոնք օրինականացրել են կրիպտոարժույթի կիրառությունը	Երկրներ, որոնք չեզոք դիրքում են կրիպտոարժույթի նկատմամբ	Երկրներ, որոնք արգելում են կրիպտոարժույթի կիրառումը
ԱՄՆ	ԱՄԷ	Եգիպտոս
Կիպրոս	Արգենտինա	Իրաք
Ճապոնիա	Էկվադոր	Կամերուն
Մալթա	Կոլումբիա	Մալդիվներ
Մեծ Բրիտանիա	Հորդանան	Մարոկկո
Սալվադոր	Ղազախստան	Նեպալ
Սլովենիա	Չիլի	Չինաստան
Վրաստան	Պանամա	Սաուդյան Արաբիա
Ուկրաինա	Ուրուգվայ	Վիետնամ
Ֆիլիպիններ	Քենիա	Կատար

<sup>34</sup> John Detrixhe ,Robert Shiller wrote the book on bubbles. He says “the best example right now is bitcoin.”, Sep 5,2017, <https://qz.com/1067557/robert-shiller-wrote-the-book-on-bubbles-he-says-the-best-example-right-now-is-bitcoin>  
<sup>35</sup> Irina Cvetkova, Cryptocurrencies legal regulation, 2018, available at [https://www.researchgate.net/publication/326195399\\_Cryptocurrencies\\_legal\\_regulation](https://www.researchgate.net/publication/326195399_Cryptocurrencies_legal_regulation)  
<sup>36</sup> Cryptocurrencies: A Guide to Getting Started, 2021, [https://www3.weforum.org/docs/WEF\\_Getting\\_Started\\_Cryptocurrency\\_2021.pdf](https://www3.weforum.org/docs/WEF_Getting_Started_Cryptocurrency_2021.pdf)  
<sup>37</sup> Աղյուսակը կազմել է հեղինակը. տվյալները հասանելի են՝ <https://coin.dance/poli>



չև 7<sup>38</sup>: Սրանով պայմանավորված՝ եթե բիթքոյնի օգտատերերի քանակն աճի, ապա հնարավոր է՝ համակարգը ճահճանա գործարքների կնքման առումով՝ մեծաքանակ ուշացումների պատճառով:

Քանի որ բլոկչեյնի համակարգը չի վերահսկվում, չեն բացառվում համակարգային անվտանգության խախտումները, որոնք կարող են ունենալ լուրջ հետևանքներ՝ պայմանավորված հաքերային (ցանցահենային) հարձակումներով:

Կարծում ենք՝ ամենակարևոր ռիսկը, որին կարող են բախվել կրիպտոարժույթի օգտատերերը, կապված է վերջինիս անկայունության հետ, ինչը կարող է հանգեցնել ինչպես շահութաբեր ներդրումների, այնպես էլ ֆինանսական անդառնալի կորուստների: Իր պատմական առավելագույն գնին հասնելուց հետո բիթքոյնն ավելի քան 40% անկում ապրեց՝ մեծաքանակ կորուստներ պատճառելով օգտատերերին:

Բացի անկայունության բարձր մակարդակից, կրիպտոարժույթները բնութագրվում են խարդախության, հաքերային հարձակումների զգալի ռիսկերով՝ իրավական պաշտպանության բացակայության պատճառով: Գաղտնաբառերը կորցնելու կամ մոռանալու դեպքում կրիպտոհաշիվը հնարավոր չէ վերականգնել, հետևաբար՝ գոյություն չունի համապատասխան կառուցակարգ սեփական հաշիվը վերականգնելու համար:

**Հնարավորություններ:** Կրիպտոարժույթները գործարքների կնքման առավել արագ ու արդյունավետ միջոց են, քանի որ բացակայում են ֆինանսական միջնորդները (օրինակ՝ բանկերը): Սրա շնորհիվ՝ հնարավոր է լինում զերծ մնալ լրացուցիչ գործառնական ծախսերից, ինչը նշանակում է, որ փոխանակման այս եղանակը տնտեսավարող սուբյեկտների համար շատ ավելի շահավետ է: Կրիպտոարժույթների դեպքում օգտագործվում է ուժեղ գաղտնագրություն, ինչը գործարքները շատ ավելի անվտանգ է դարձնում, քան ավանդական բանկային համակար-

գերի պարագայում է<sup>39</sup>: Բլոկչեյնը, պահպանելով կատարված գործարքների ողջ պատմությունը, դրանով իսկ ապահովում է համակարգի թափանցիկությունը մասնակիցների միջև և, ըստ այդմ, բացառում կեղծելու հնարավորությունը, քանի որ կեղծված բլոկչեյնի կհակասի ցանցի մնացած բոլոր համակարգիչներում առկա բլոկների ճիշտ շղթաներին և դուրս կմղվի ընդհանուր համակարգից մայրերների կողմից: Առաջնորդվելով թափանցիկությամբ՝ համակարգն ապահովում է օգտատիրոջ ամբողջական գաղտնիությունը: Յուրաքանչյուր օգտատեր կարող է ստեղծել անսահմանափակ քանակությամբ հասցեներ՝ առանց նշելու որևէ անձնական տվյալ: Առցանց գնումների կամ գործարքների համար հաճախ պահանջվող քարտերի, անձնական տվյալների մուտքագրումը ներկայում մեծացրել է խարդախության և ֆինանսական միջոցների կորստի հավանականությունը, իսկ կրիպտոարժույթներն «առաջնորդվում» են «բանալիների» առկայությամբ, որոնք փոխարինում են բոլոր անձնական տվյալներին:

Կրիպտոարժույթային համակարգում կատարված վճարումները հնարավոր չէ չեղարկել, ինչպես նաև կրիպտոարժույթները չեն կարող կեղծվել կամ կրկնօրինակվել: Կրիպտոարժույթային պաշարները պատկանում են միայն օգտատիրոջը և միայն նրան են հասանելի, հետևաբար՝ բացառվում է հաշվի սառեցումը կամ այլ արտաքին ազդեցություն, որով և պայմանավորված է օգտատիրոջ՝ իր պաշարների նկատմամբ սեփականության իրավունքը: Կրիպտոարժույթային գործարքների դեպքում յուրաքանչյուր օգտատեր կարող է վճարել որևէ այլ օգտատիրոջ յուրաքանչյուր վայրում, որտեղ առկա է համացանց՝ անկախ մյուս օգտատիրոջ գտնվելու վայրից: Սա հատկապես հնարավորություն է տալիս կատարելագործելու թերզարգացած ֆինանսական համակարգերը, մասնավորապես՝ ձեռնարկատիրության և էլեկտրոնային առևտրի ոլորտներում:

Միաժամանակ, համակարգը թույլ է

<sup>38</sup> Pedro Gómez Martín-Romo, Invertir en bitcoins, January 15, 2022, <https://www.ibercampus.es/invertir-en-bitcoins-razones-del-exito-y-riesgos-evidentes-incluido-un-derrumbe-que-termine-pagando-toda-la-sociedad.htm>

<sup>39</sup> Coinbase: What is cryptography? <https://www.coinbase.com/ru/learn/crypto-basics/what-is-cryptography>

տալիս փոխանցումներ կատարել մի քանի ռոպեի ընթացքում (BTC համակարգի մշակումից հետո), որը նպաստում է հատկապես միջազգային գործարքների և առևտրի հետագա զարգացմանը:

**Եզրակացություն:** Կրիպտոարժույթները երբևէ ստեղծված ամենաբարդ դրամական միջոցներն են: Հաշվի առնելով և՛ դրանց թերությունները, և՛ առավելությունները՝ կարելի է ասել, որ բլոկչեյն տեխնոլոգիաները կարող են արժատապես փոխել անկանխիկ գործարքների շուկան:

Կրիպտոարժույթների՝ որպես ժամանակակից ֆինանսական գործիքների զարգացման ու տարածման հեռանկարը շարունակում է մնալ անորոշ, թեև աշխարհի մի շարք երկրներ արդեն իսկ փորձում են

իրավապես կարգավորել համապատասխան շուկան:

Տնտեսության թվայնացման և տեխնոլոգիաների աննախադեպ զարգացման պայմաններում կրիպտոարժույթների՝ ապագայի փողի վերածվելու մասին ենթադրություններն էլ ավելի իրատեսական են դառնում, եթե շտկվեն այն թերությունները, որոնք մատնանշում են քննադատները: Մի բան հստակ է, եթե հնարավոր լինի ապահովել որոշակի կայունություն, ապա երկրներն ավելի պատրաստակամորեն կընդունեն կրիպտոարժույթների կիրառությունը: Իսկ թե արդյո՞ք կրիպտոստանդարտը կունենա ապագա, թե՛ կծախողի, ցույց կտա ժամանակը:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավանյան Ա. Լ., Էլեկտրոնային փողը և դրա զարգացման հեռանկարները, 2018, [http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2019\\_7\\_78\\_84.pdf](http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2019_7_78_84.pdf)
2. Դանիելյան Հ., Խորհրդավոր կրիպտոաշխարհ, Երևան, 2019:
3. Ղալայան Ի., Կրիպտոարժույթի շուկայի ճգնաժամը, 29.01.2019, <https://orbeli.am/hy/post/115/2019-01-29/%D4%B-F%D6%80%D5%AB%D5%BA%D5%BF%D5%B8%D5%A1%D6%80%D5%AA%D5%B8%D6%82%D5%B5%D5%A9%D5%AB+%D5%B7%D5%B8%D6%82%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB+%D5%B3%D5%A3%D5%B6%D5%A1%D5%AA%D5%A1%D5%B4%D5%A8>
4. «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=67780>
5. Pedro Gómez Martín-Romo, Invertir en bitcoins, 15th January 2022, <https://www.iber-campus.es/invertir-en-bitcoins-razones-del-exito-y-riesgos-evidentes-incluido-un-derrumbe-que-termina-pagando-toda-la-sociedad.htm>
6. Robert Shiller “Irrational Exuberance”, 2017, <https://www.investopedia.com/news/yale-economist-believes-bitcoin-bubble-could-last-100-years/>
7. On the Origin of Money by Carl Menger (1892), [Economic Journal, Volume 2 (1892), pp. 239-55. Translated by Caroline A. Foley.], <https://monadnock.net/menger/money.html>
8. Irina Cvetkova, Cryptocurrencies legal regulation, 2018, [https://www.researchgate.net/publication/326195399\\_Cryptocurrencies\\_legal\\_regulation](https://www.researchgate.net/publication/326195399_Cryptocurrencies_legal_regulation)
9. Henri Arslanian, El Salvador’s law: a meaningful test for Bitcoin, 2021, <https://www.pwc.com/gx/en/financial-services/pdf/el-salvadors-law-a-meaningful-test-for-bitcoin.pdf>
10. Andrew Tar Digital Currencies vs. Cryptocurrencies. Dec 13.2017, <https://cointelegraph.com/explained/digital-currencies-vs-cryptocurrencies-explained>
11. John Detrixhe, Robert Shiller wrote the book on bubbles. He says “the best example right now is bitcoin.”, Sep 5, 2017, <https://qz.com/1067557/robert-shiller-wrote-the-book-on-bubbles-he-says-the-best-example-right-now-is-bitcoin>
12. Andy Greenberg, Crypto Currency, April 20, 2011, <https://www.forbes.com/forbes/2011/0509/technology-psilocybin-bitcoins-gavin-andresen-crypto-currency.html?sh=6421d66f353e>
13. Ashmore Dan, Bitcoin Price History 2009 to 2022, October 11, 2022, <https://www.forbes.com/advisor/investing/cryptocurrency/bitcoin-price-history/>, <https://www.nasdaq.com/articles/top-10-cryptocurrencies-of-2022>
14. Marc Frank, Cuba approves cryptocurrency services, requires central bank license, April 28, 2022, <https://www.reuters.com/world/americas/cuba-approves-cryptocurrency-services-requires-cen>

- tral-bank-license-2022-04-27/  
15. What's behind China's cryptocurrency ban?  
Jan 31, 2022,  
<https://www.weforum.org/agenda/2022/01/what-s-behind-china-s-cryptocurrency-ban/>
16. Cryptocurrencies: A Guide to Getting Started, 2021,  
[https://www3.weforum.org/docs/WEF\\_Getting\\_Started\\_Cryptocurrency\\_2021.pdf](https://www3.weforum.org/docs/WEF_Getting_Started_Cryptocurrency_2021.pdf)
17. Mario Canul, Introduction to Monero and how it's different, 2019,  
<https://maui.hawaii.edu/wp-content/uploads/sites/13/2019/01/Monero.pdf>
18. Coinbase: What is cryptography?  
<https://www.coinbase.com/ru/learn/crypto-basics/what-is-cryptography>
19. <https://www.statista.com/statistics/863917/number-crypto-coins-tokens/>
20. <https://coin.dance/poli>

**Грета ГУРУЯН**  
*Магистрант, АГЭУ*

ФИНАНСОВАЯ СИСТЕМА

### **КРИПТОВАЛЮТЫ: РИСК ИЛИ ВОЗМОЖНОСТЬ?**

Криптовалюты считаются новым типом валюты в мировой валютно-финансовой системе. С момента появления первой криптовалюты в 2009 году по настоящее время существует более 10 000 видов криптовалют, но не все из них эффективно используются, в основном из-за перенасыщенности рынка, большей волатильности цен и недостаточной информированности. Этот новый тип валюты, названный “Криптовалютой”, всего менее чем за десять лет полностью изменил глобальную валютную систему, инвестиции и экономическую реальность. Являясь инновацией в денежно-финансовой системе, криптовалюты неоднократно подвергались резкой критике, однако нельзя не отметить положительное отношение специалистов к этому новому явлению. В этой статье мы попытались представить возможные причины успеха криптовалют, риски и возможности, связанные с их использованием, а также их дальнейшее распространение и регулирование в разных странах.

**Ключевые слова:** *криптовалюта, система блокчейн, майнинг, правовое регулирование*

**Greta GURURYAN**  
*Master's student, ASUE*

FINANCIAL SYSTEM

### **CRYPTOCURRENCIES: RISK OR OPPORTUNITY?**

Cryptocurrencies represent a relatively new type of currency in the global monetary and financial system. Since the introduction of the first cryptocurrency in 2009, there are more than 10,000 types of cryptocurrencies, but not all of them are effectively used, mainly due to the oversaturation of the market, greater price volatility and lack of widespread awareness. This disruptive form of currency, known as “Cryptocurrencies”, completely transformed the global payment and transaction system, the field of investment, and economic reality in less than a decade. Being an innovation in the monetary and financial system, cryptocurrencies are repeatedly subjected to sharp criticism, but it is difficult to overlook the positive attitude of experts towards this new phenomenon. In this paper, we aim to present the possible reasons for the success of cryptocurrencies and the risks and opportunities associated with their application. Additionally, we delve into the regulatory approaches to cryptocurrencies in different countries.

**Key words:** *cryptocurrency, blockchain system, mining, legal regulation*